*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի*
*հուլիսի 30-ի թիվ 124-Ա որոշման*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ**

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

# Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Տեղեկատվություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 4 – 12 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց բացակայության վերաբերյալ գրառումներ 12- 20 էջեր

Արձանագրված այլ փաստեր 20 – 22 էջեր

Առաջարկություններ 22 էջ

Հավելված 1

# ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 72-Ա որոշում: |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ ոստիկանություն: |
| **Հաշվեքննության առարկան** | 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը : |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2020 թվականի հունիսի 8-ից մինչև հուլիսի 31-ը: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն<br><br>Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը : |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինն երորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը: |

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի առաջին եռամսյակում ՀՀ ոստիկանությունը ըստ ներկայացված հաշվետվության հավաքագրել է 6,748,060.2 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

| Բյուջետային եկամուտների անվանում | Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ | Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ |
|---|---|---|
| Պետական տուրքեր | 1,691,055.0 | 1,692,049.8 |
| Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ | 5,735.0 | 7,499.2 |
| Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր | 2,949,172.5 | 2,856,142.0 |
| ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր | 2,648,199.0 | 2,188,820.9 |
| ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր | 7,500.0 | 3,548.3 |
| **Ընդամենը** | **7,301,661.5** | **6,748,060.2** |

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 553,601.3 հազ. դրամով պակաս եկամուտներ, պայմանավորված ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից պահպանվող իրավաբանական և ֆիզիկական անձանց օբյեկտների թվի էական կրճատումով, որը հնարավոր չէր կանխատեսել պլանավորման ընթացքում:

2020 թվականի առաջին եռամսյակի համար ՀՀ ոստիկանությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 15,095,543.5 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 15,104,926.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 13,123,861.9 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2020 թվականի առաջին եռամսյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

| Ծրագրային միջոցառում | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|
| **Հասարակական անվտանգության ապահովում** | | | | |
| Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար | 5,904,244.9 | 5,557,224.0 | 5,545,033.7 | 5,592,927.5 |
| Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում | 962,859.1 | 904,284.4 | 902,902.1 | 902,871.8 |
| ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ | 2,030.5 | 2,030.5 | 2,030.5 | 2,030.5 |
| Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում | 1,701,046.6 | 1,297,704.4 | 1,296,923.3 | 1,296,923.3 |
| **Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում** | | | | |
| Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում | 481,682.2 | 438,934.3 | 437,669.4 | 585,273.0 |
| **Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում** | | | | |
| Առողջապահական ծառայությունների տրամադրում | 215,217.5 | 199,187.9 | 199,187.9 | 211,645.4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց | 10,524.5 | 1,900.0 | 1,900.0 | 15,783.2 |
| **Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն** | | | | |
| Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում | 2,377,203.3 | 2,007,591.2 | 1,989,789.8 | 1,920,835.1 |
| Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ | 872.3 | 852.6 | 817.0 | 817.0 |
| **Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում** | | | | |
| Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում | 2,840,138.6 | 2,439,283.8 | 2,439,283.8 | 2,612,939.0 |
| Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում | 217,631.3 | 13,885.0 | 13,885.0 | 85,704.8 |
| **Ոստիկանության կրթական ծառայություններ** | | | | |
| Ոստիկանության կրթական ծառայություններ | 391,475.5 | 260,983.7 | 260,983.7 | 260,983.7 |
| **Ընդամենը** | **15,104,926.4** | **13,123,861.9** | **13,090,406.3** | **13,488,734.4** |

ՀՀ ոստիկանության 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսերի ճշտված պլանով նախատեսվել է 15,104,926.4 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 13,123,861.9 հազ.դրամ կամ ճշտված պլանի 86.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 13,090,406.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 86.7 %-ը:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանությունը պետք է իրականացնի վեց ծրագրեր:

«Հասարակական անվտանգության ապահովում» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 8,570,181.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 7,761,243.3 հազ.դրամ կամ ճշտված պլանի 90.6 %-ը, դրամարկղային ծախսը՝ 7,746,889.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.4 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 24 ցուցանիշներ, մասնավորապես՝ կարգախմբերի կողմից

վերահսկվող երթուղիների միջին օրական երկարություն, բացահայտված հանցագործությունների թիվ, պահպանվող օբյեկտների թիվ և այլ: Ծրագրի միջոցառումները չորսն են.

- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,904,244.9 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 5,557,224.0 հազ.դրամ կամ ճշտված պլանի 94.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 5,545,033.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.9 %-ը:
- «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 962,859.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 904,284.4 հազ.դրամ կամ ճշտված պլանի 93.9 %-ը, դրամարկղային ծախսը՝ 5,545,033.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.8 %-ը:
- «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառման կատարման առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,030.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 2,030.5 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 100 %-ով:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,701,046.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 1,297,704.4 հազ.դրամ կամ ճշտված պլանի 76.3 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,296,923.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 76.2 %-ը:

«Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 481,682.2 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է է 438,934.3 հազ.դրամ կամ ճշտված պլանի 91.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 437,669.4 հազ. դրամ ճշտված պլանի 90.9 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 19 ցուցանիշներ, մասնավորապես՝ տրված վիզաների թիվ, նույնականացման քարտերի թիվ, նույնականացման քարտերի տրամադրման ժամկետ և այլ: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

- «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 481,682.2 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 438,934.3 հազ.դրամ կամ ճշտված պլանի 91.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 437,669.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.9 %-ը:
- «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 135,561.0 հազ.դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում միջոցառման համար ծախս չի նախատեսվել:

«Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 225,742.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է է 201,087.9 հազ.դրամ կամ ճշտված պլանի 89.1 %-ը, իսկ դրամարկղային ծախսը՝ 201,087.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի՝ 89.1 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 9 ցուցանիշներ, մասնավորապես՝ ամբուլատոր պոլիկլինիկական

այցելությունների թիվ, հիվանդանոցային բուժօգնություն ստացած ծառայողների թիվ, դեղորայքի տեսականի և այլ: Ծրագրի միջոցառումները երեքն են.

- «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 215,217.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 199,187.9 հազ.դրամ կամ ճշտված պլանի 92.6 %-ը:
- «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 10,524.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1.900.0 հազ.դրամ կամ ճշտված պլանի 18.1 %-ը:
- «ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,660.0 հազ.դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում միջոցառման համար ծախս չի նախատեսվել:

«Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 391,475.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 260.983.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.7 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 12 ցուցանիշներ, մասնավորապես՝ բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական ուսուցում ստացողների թիվ, ուսման տևողություն և այլ:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,378,075.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է է 2,008,443.8 հազ.դրամ կամ ճշտված պլանի 84.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,990,606.8 հազ. դրամ

կամ ճշտված պլանի 83.7 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 8 ցուցանիշներ, մասնավորապես՝ ոստիկանության կողմից դատարաններում բերված հայցերի թիվ, ոստիկանության ոլորտի քաղաքականությանը վերաբերվող իրավական ակտերի նախագծերի թիվ, ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերի թիվ և այլ: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,377,203.3 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 2,007,591.2 հազ.դրամ կամ ճշտված պլանի 84.5 %-ը, դրամարկղային ծախսը՝ 1,989,789.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83,7 %-ը:
- «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 872.3 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 852.6 հազ.դրամ կամ ճշտված պլանի 97.7 %-ը, դրամարկղային ծախսը՝ 817.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 93.7 %-ը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագրով, որի 2020 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 3,057,769.9 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է է 2,453,168.9 հազ.դրամ կամ ճշտված պլանի 80.2 %-ը, դրամարկղային ծախսը՝ 2,453,168.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.2 %-ը: Ծրագրի համար նախատեսվել են արդյունքային (կատարողական) 24 ցուցանիշներ, մասնավորապես՝ տրամադրված վարորդական վկայականների քանակ, երթևեկության կանոնների խախտման համար նշանակված տուգանքների քանակ, տրամադրված հաշվառման համարանիշների քանակ և այլ: Ծրագրի միջոցառումները երեքն են.

- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,840,138.6 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 2,439,283.8 հազ.դրամ կամ ճշտված պլանի 85.9 %-ը:
- «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման կատարման համար առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 217,631.3 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 13,885.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 6.4 %-ը:
- «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 515,041.7 հազ.դրամ: Միջոցառման համար առաջին եռամսյակում ծախս չի նախատեսվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 7,903,890.0 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 5,468,757.6 հազ. դրամ,
2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 895,516.6 հազ. դրամ,

3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսեր՝ 430,052.0 հազ. դրամ,

4. առանձին ծրագրերի միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից կնքված 21 պայմանագրեր, որոնցով 2020 թվականի առաջին եռամսյակում կատարված ծախսերը կազմել են 1,320,759.6 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում կատարված 8,115,085.8 հազ. դրամի ծախսերը:

## ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 3) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի

միջոցով կատարվել է 169 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

| Պաշտոնների խումբ | Միջոցառում 1 | | Միջոցառում 2 | | Միջոցառում 3 | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընտրված աշխատողների քանակ | ճշգրտված քանակ | ընտրված աշխատողների քանակ | ճշգրտված քանակ | ընտրված աշխատողների քանակ | ճշգրտված քանակ |
| Գլխավոր խումբ | 4 | 4 | 0 | 1 | 0 | 1 |
| Ավագ խումբ | 11 | 11 | 0 | 1 | 0 | 1 |
| Միջին խումբ | 56 | 56 | 1 | 1 | 2 | 2 |
| Կրտսեր խումբ | 58 | 58 | 17 | 17 | 0 | 1 |
| Քաղ. հատուկ ծառայող | 1 | 1 | - | - | 6 | 8 |
| Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող | 3 | 3 | 2 | 2 | 0 | 1 |
| Ընդամենը | 133 | 133 | 20 | 22 | 8 | 14 |

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար և մարտ ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան: Բացառություն են կազմել ՀՀ ոստիկանության ԵՔՎ ՊՊԾ գնդի 4-րդ գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի ավագ ոստիկանին վճարված լրավճարի գումարը (սահմանված է ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն որոշմամբ), որը չի համապատասխանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հավելվածի աղյուսակով հաշվարկվող համապատասխան դրույքաչափի մակարդակին: 2020 թվականի հունվար, փետրվար ամիսներին, ինչպես նաև 2019 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին այդ

ոստիկանին վճարվել էր ամսական 17086 դրամ լրավճար, մինչդեռ պետք է վճարվեր 18441 դրամ լրավճար կամ յուրաքանչյուր ամիս վճարվել է 1355 դրամով պակաս: Տարբերությունը ՀՀ ոստիկանության կողմից վերահաշվարկվել և վճարվել է 2020 թվականի ապրիլ ամսին: Մեկ այլ դեպքում ՀՀ ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Գյումրու պահպանության բաժնի մեկ աշխատակցի լրավճարը մարտ ամսին հաշվարկվել և վճարվել է ՀՀ կառավարության 03.07.2014թ. N 710-Ն որոշմամբ սահմանված լրավճարի չափից 5451 դրամով պակաս, որը վերահաշվարկվել և վճարվել է ապրիլ ամսին:

2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրերի կատարման համար մարտի 31-ի դրությամբ ՀՀ ոստիկանությունը կնքել է գումարային 8,145,369.2 հազ. դրամի պայմանագրեր:

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

հազ. դրամ

| Կատարող | Պայմանագրի համար | Պայմանագրի գումար | Առաջին եռամսյակի վճարում |
|---|---|---|---|
| **Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար** | | | |
| «ՖԼԵՇ» ՍՊԸ | ՀՀ ՈԶ ՀԲՄԱՊՁԲ-20/1/Բ/4/ՎՔՆ-31 | 10,170.0 | 10,170.0 |
| «Սիֆիէս Օիլ» ՍՊԸ | ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-2020/1/Բ/2/ՎՔՆ-1 | 5,739.9 | 5,739.9 |
| «ՀԱԴՐՈՒԹ 1» ՍՊԸ | ՀՀ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/2/Բ/4/ՊԾ-41 | 19,932.4 | 170.6 |
| **Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում** | | | |
| «Սիֆիէս Օիլ» ՍՊԸ | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2020-ՎԱՌ-ՊՊԳՎ-25 | 172,769.6 | 43,183.0 |
| **Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում** | | | |
| «Հատուկ կապ» ՓԲԸ* | ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՓԿԾ/2020/ԱՎՎ | 21,000.0 | 3,685.3 |
| **Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում** | | | |
| «Հայփոստ» ՓԲԸ | PD-170-02-20 | 13,000.0 | 2,600.0 |
| «ՖՎ և Գ» ՍՊԸ* | ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԾՍ/2020 | 44,000.0 | 7,333.3 |
| Հատուկ կապ ՓԲԸ* | ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՓԾ/2020 | 45,750.0 | 7,053.0 |
| «Սիֆիէս Օիլ» ՍՊԸ | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-2020-ՈՍ/ՎԱՌ-17 | 909,273.9 | 229,143.9 |
| «Երեխայի զարգացման կենտրոն» | 01 | 18,063.0 | 4,500.0 |

| | | | |
|---|---|---|---|
| ՊՈԱԿ | | | |
| «Դինամո» մարզական հասարակական կազմա կերպություն: | 1 | 24,464.2 | 6,116.1 |
| **Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում** | | | |
| «Հայփոստ» ՓԲԸ | CPS-18-02-20 | 380,000.0 | 76,000.0 |
| «ՖՎ և Գ» ՍՊԸ* | ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԻՆՏ/2020/ՃՈ/1 | 22,000.0 | 3,400.0 |
| «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ | ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 01/2020 | 3,272,200.0 | 754,440.0 |
| «ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ | ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԱԶԴԱՆՇԱՆ-21 | 258,412.0 | 34,562.5 |
| «Լեգիոն 9» ՍՊԸ | ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ՎՏ/ՃՈ-2020 | 50,000.0 | 3,907.8 |
| ՕՕՕ «SOCIOS» | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ-2019/Ա-65. | 31,164.0 | 31,164.0 |
| ՕՕՕ «SOCIOS» | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ-2019/Ա-65.. | 83,104.0 | 41,552.0 |
| «Էյչ Գրուպ» ՍՊԸ | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ԿԻՆԵԳՐԱՄ-2020/Ա-15 | 209,751.5 | 39,768.5 |
| «Էյչ Գրուպ» ՍՊԸ | ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ԿԻՆԵԳՐԱՄ-2020/Ա-16 | 21,064.3 | 2,384.6 |
| **Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում** | | | |
| «ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ | ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԺԱՄՀԱՄ-2019/Ա-63. | 22,568.0 | 13,885.0 |
| **Ընդամենը** | | **5,634,426.8** | **1,320,759.6** |

* *Ծանոթագրում՝ պայմանագրերը կնքվել են մեկ անձից գնման ձևով:*

ՀՀ ոստիկանությունը մեկ անձից գնման ընթացակարգով «Հատուկ կապ» ՓԲԸ հետ կնքել է երկու պայմանագիր՝ գումարային 66,750.0 հազ. դրամ արժեքով և «ՖՎ և Գ» ՍՊԸ հետ երկու պայմանագիր՝ գումարային 66,000.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրերը կնքվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի փետրվարի 26-ին կնքվել է փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝ 13,000.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի շրջանակում ՀՀ ոստիկանությունը վճարում է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող հետևյալ ծառայությունների դիմաց՝ «փոստային ծառայություն՝ ծրարներ», որը ծրարների փաստացի ձեռքբերումն է

«Հայփոստ» ՓԲԸ-ից (ծրարների արժեքն ըստ չափերի՝ 30, 60, 90, 120 դրամ), «սուրհանդակային ծառայություն», որը ներառում է ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներից նամակների տեղափոխումը մոտակա «Հայփոստ» ՓԲԸ բաժանմունք (յուրաքանչյուր այցի համար վճարը կազմում է 500 դրամ), «փոստային ծառայություն՝ նամականիշներ» (արժեքը կախված է նամակի քաշից՝ մինչև 20 գրամ քաշ՝ 70 դրամ, մինչև 100 գրամ՝ 170 դրամ, մինչև 250 գր՝ 350 դրամ, մինչև 500 գր՝ 650 դրամ, մինչև 1000 գրամ՝ 1200 դրամ, մինչև 2000 գր՝ 1800 դրամ, նամակի հետագիծը հսկելու նպատակով յուրաքանչյուր պատվիրված նամակի համար՝ 50 դրամ), «նամականիշների փակցնում» յուրաքանչյուր նամակի վրա՝ 20 դրամ:

Փոստային ծառայությունների մատուցման ընթացակարգի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պայմանագրի գումարի հիմնական բաղկացուցիչը «փոստային ծառայություն՝ նամականիշներ» ծառայությունն է, որը հաշվարկվում է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից նամակները կշռելու հիման վրա, և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու համար ակտով ներկայացվում է ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանում: ՀՀ ոստիկանությունը ամփոփում է ստորաբաժանումներից ստացված ակտերը, որի հիման վրա կատարում է վճարում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Հայփոստ» ՓԲԸ հարկային հաշիվներում «փոստային ծառայություն՝ նամականիշներ», «փոստային ծառայություն՝ ծրարներ» տողերի «Ընդհանուր ծավալը» սյունակում ըստ տեսականու օգտագործված նամականիշների և ծրարների քանակի ու արժեքի փոխարեն նշված է «1» թիվը: Փաստորեն, ՀՀ ոստիկանության կողմից հնարավոր չի ստուգել նամակների քաշով պայմանավորված մատուցված ծառայության դիմաց «Հայփոստ» ՓԲԸ հարկային հաշիվներով ներկայացված գումարների հիմնավորվածությունը: Հաշվեքննության ընթացքում հաշվարկվել է ըստ հարկային հաշիվների առաջին եռամսյակում մեկ առաքանու միջին գինը, որը կազմել է 232.5 դրամ:

Բացի այդ, պարզվել է նաև, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման շրջանակում ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև նույն օրը՝ 2020 թվականի փետրվարի 26-ին կնքվել է փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման թիվ CPS-18-02-20 պայմանագիրը՝ 380,000.0 հազ. դրամ արժեքով: Համաձայն պայմանագրի՝ մեկ առաքանու սակագինը (ներառյալ ԱԱՀ) կազմում է 350 դրամ, որը զգալի գերազանցում է ծառայության մատուցման համար ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված վերոնշված պայմանագրի մեկ առաքանու միջին գինը՝ 232.5 դրամը:

Հարցի ուսումնասիրության ընթացքում համեմատություն է կատարվել փոստային ծառայութունների խոշոր օգտատեր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի սակագների հետ: Պարզվել է, որ ԴԱՀԿ ծառայության մեկ առաքանու գինը, պայմանավորված նամականիշով տատանվում է 70 դրամից մինչև առավելագույնը 280 դրամ: Ընդ որում, ԴԱՀԿ ծառայությունը առաքանու ծրարները գնում է ոչ թէ «Հայփոստ» ՓԲԸ-ից, այլ մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված մատակարարներից, մեկ հատը՝ մինչև 12 դրամ գնով:

Փաստորեն, պետական կարիքների համար գնման գործընթացում չի ցուցաբերվում միասնական մոտեցում և կնքված պայմանագրերով առկա են սակագների էական տարբերություններ:

Հաշվեքննվող օբյեկտի պարզաբանումը.

*««Հայփոստ» ՓԲԸ–ն, որպես փոստային կապի ազգային օպերատոր, ծառայությունները մատուցում է պետականորեն հաստատված սակագներով: Պայմանավորված թե փոստային առաքանու և թե ծառայությունների բազմազանությամբ (օրինակ ՀՀ տարածք կամ միջազգային՝ փոստային բացիկներ, նամակներ, փաթեթներ՝ հասարակ, պատվիրված, շտապ, լրացուցիչ ծառայություններ և այլն) առաքանու գինը,*

*թե ըստ ոստիկանության առանձին ստորաբաժանումների և թե ըստ առանձին հաշվետու ժամանակաշրջանների որպես կանոն տարբեր է: Ինչ վերաբերվում է «Հայփոստ» ՓԲԸ հարկային հաշիվներով ներկայացված գումարների հիմնավորվածության ապահովմանը, ապա այն ընդունվել է ի գիտություն և ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ առաջիկա 2-3 օրվա ընթացքում է «Հայփոստ» ՓԲԸ-ի պատասխանատու պաշտոնատար անձանց հետ նախատեսվող քննարկման արդյունքում ոստիկանության բոլոր ստորաբաժանումներին կտրվի համապատասխան հանձնարարական»:*

ՀՀ ոստիկանության և ՕՕՕ «SOCIOS» միջև 2019 թվականի նոյեմբերի 26-ին կնքվել է տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի պոլիկարբոնատե քարտերի գնման պայմանագիր, որի համաձայն ընկերությունից պետք է գնվեր 110000 հատ քարտ, մեկ քարտը՝ 1038.8 դրամ արժեքով:Պայմանագրի գինը կազմում է 114,268.0 հազ. դրամ: 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1 համաձայնագրով պետք է մատակարարվեր 31,164.0 հազ. դրամի 30000 քարտ, իսկ թիվ 3 համաձայնագրով՝ 83,104.0 հազ. դրամի 80000 քարտ: Համաձայն ՀՀ ճանապարհային ոստիկանության 27.12.2019թ. թիվ 128, 24.02.2020թ. թիվ 02 և 02.03.2020թ. թիվ 03 մուտքի կարգադրությունների մատակարարվել է 110000 քարտ: ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում վճարման հանձնարարականներով ընկերությանը վճարվել է 72,716.0 հազ. դրամ: Արդյունքում, 2020 թվականի ապրիլի 1-ի դրությամբ «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով առաջացել է 41,552.0 հազ. դրամի կրեդիտորական պարտք:

ՀՀ ոստիկանությունը «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հետ 2017 թվականի փետրվարի 15-ին կնքել էր գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, որով յուրաքանչյուր տարի նախատեսվել էր վճարել ընկերությանը հավատարմագրային կառավարման ծառայությունների վճար և հատուցման ենթակա ծախսերի գումար: 2020 թվականի համար ընկերությանը նախատեսվել է վճարել հավատարմագրային կառավարման ծառայությունների դիմաց 414,200.0 հազ. դրամ և հատուցման ենթակա ծախսերի համար՝ 2,858,000.0 հազ. դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում

ՀՀ ոստիկանությունը ընկերությանը վճարել է 754,440.0 հազ. դրամ, որից 100,000.0 հազ. դրամը՝ հավատարմագրային կառավարման ծառայությունների դիմաց, 654,440.0 հազ. դրամը՝ ծախսերի փոխհատուցման համար:

ՀՀ ոստիկանությունը «Հադրութ-1» ՍՊԸ հետ 2020 թվականի մարտի 13-ին կնքել է պայմանագիր՝ 73012.5 կգ «Հրազդան» տեսակի հացի մատակարարման համար 1 կգ՝ 273 դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակում, սկսած մարտի 25-ից մատակարարվել է 625 կգ հաց, որի համար ՀՀ ոստիկանությունը վճարել է 170.6 հազ. դրամ:

Հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից բենզին և դիզելային վառելիք գնելու համար կնքած հետևյալ պայմանագրերը.

«Սիփիէս Օիլ» ՍՊԸ-ի հետ 2020 թվականի հունվարի 9-ին՝ 909,273.9 հազ. դրամի 2296146.3 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 396 դրամով,

«Սիփիէս Օիլ» ՍՊԸ-ի հետ 2020 թվականի հունվարի 10-ին՝ 172,769.8 հազ. դրամի 434095 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 398 դրամով,

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ 2020 թվականի մարտի 9-ին՝ 10,170.0 հազ. դրամի 30000 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար, 1 լիտրը՝ 339 դրամով (ամբողջությամբ մատակարարվել է 2020 թվականի մարտի 11-ին),

«Սիփիէս Օիլ» ՍՊԸ-ի հետ 2019 թվականի դեկտեմբերի 16-ին՝ 5,739.9 հազ. դրամի 15640 լիտր դիզելային վառելիք ձեռք բերելու համար, 1 լիտրը՝ 367 դրամով, (ամբողջությամբ մատակարարվել է 2020 թվականի մարտի 24-ին):

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2020 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finans և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացվում են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

| Անհամապատասխանություն | Իրավական ակտ | Գումար |
|---|---|---|
| Մեկ ավագ ոստիկանի հունվար, փետրվար և մարտ ամիսներին վճարվել է պակաս լրավճար | ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն որոշում | 4.1 |
| Մեկ ոստիկանի մարտ ամսին վճարվել է պակաս լրավճար | ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն որոշում | 5.5 |
| Պետական կարիքների համար փոստային ծառայությունների գնման գործընթացում չի ցուցաբերվում միասնական մոտեցում և կնքված պայմանագրերով առկա են սակագների էական տարբերություններ | ՀՀ ոստիկանության և «Հայփոստ» ՓԲԸ միջև կնքված թիվ PD-170-02-20 և CPS-18-02-20 պայմանագրեր, ԴԱՀԿ և «Հայփոստ» ՓԲԸ միջև կնքված թիվ PD-68-01-19 պայմանագիր | |

## ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման շրջանակներում ՀՀ ոստիկանության և Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպության միջև 2020 թվականի հունվարի 13-ին կնքվել է դրամաշնորհի պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ոստիկանությունը պարտավորվել է կազմակերպությանը հատկացնել մինչև 24,464.2 հազ. դրամ 2020 թվականի համար, որից 6,116.1 հազ. դրամը՝ 1-ին եռամսյակում, իսկ կազմակերպությունը պարտավորվել է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ ՀՀ ոստիկանության ծառայողների առողջության ամրապանդման, աշխատունակության և մարտունակության բարձրացում, ֆիզիկական պատրաստականության, ծառայողակիրառական և զանգվածային մարզաձևերի տիրապետման

հմտության բարձրացում ու կատարելագործում, ՀՀ ոստիկանության աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների անցկացման և առողջության ամրապնդման համար անվճար հիմունքներով մարզադահլիճների, մարզահրապարակների և մարզագույքի տրամադրում, համապատասխան կահավորանքով մասնագիտացված մարզադահլիճների, խաղադահլիճի և կոմունալ պայմանների ապահովում:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ պայմանագրով սահմանված չեն դրամաշնորհով հատկացվող գումարի չափի որոշման սկզբունքները, ինչպես նաև նախատեսված միջոցառումների իրականացման համար ծախսերի համապատասխան հաշվարկները և հիմնավորումները:

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2020 թվականի ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ առկա են տարեց տարի փոխանցվող դեբիտորական պարտքեր: Այսպես, «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառման «համակարգչային ծառայություններ» հոդվածով 14,949.0 հազ. դրամ դեբիտորական պարտքը առաջացել է 2017 թվականի հունվարի 18-ին «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը որպես կանխավճար 2018 թվականի հունվարի 21-ին փոխանցվել էր ընկերությանը: Հետագայում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1724-Ա որոշումը, պայմանագրի ժամկետը կողմերի համաձայնությամբ երկարաձգվել է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը: Նույն միջոցառման շրջանակում առկա են նաև դեբիտորական պարտքեր «հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով՝ 2,014.0 հազ. դրամ, և «ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» հոդվածով՝ 1,900.0 հազ. դրամ: Նախորդ տարիներից փոխանցված այդ դեբիտորական պարտքերի առաջացման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը (հաշվի առնելով դեբիտորական պարտքերի վերաբերյալ գրավոր պարզաբանումները) ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, ներկայացրել է պարզաբանումներ: Արձանագրված այլ փաստերի վերաբերյալ հաշվեքննվող օբյեկտի պարզաբանումները ներկայացված են հավելված 1-ում:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ ոստիկանությանը՝**

– ուսումնասիրել Ճանապարհային ոստիկանության կարիքների համար փոստային ծառայությունների գնման պայմանագրի գնագոյացումը և անհրաժեշտության դեպքում վերանայել պայմանագրի գինը,

– բյուջետային միջոցների տնտեսման նպատակով քննարկել մրցութային եղանակով փոստային ծրարների գնման նպատակահարմարությունը,

– ձեռնարկել միջոցներ նախորդ տարիներից փոխանցված դեբիտորական պարտքերը մարելու ուղղությամբ,

– ՀՀ ոստիկանության համակարգի կազմակերպություններին դրամաշնորհները տրամադրել նախատեսվող միջոցառումների ծախսերի հստակ հաշվարկների հիման վրա:

***Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:***

Հավելված 1

**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

- Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունը տարիներ շարունակ հանդիսանում է ոստիկանության ծառայողների ֆիզիկական և մարտական պատրաստականության ապահովման հիմնական բազան («Դինամո» ՀԿ-ում 2019 թ.-ին ոստիկանության ծառայողները 7 մարզաձևերի գծով ձևավորված 62 խմբերում անց են կացրել շուրջ 791 պարապմունք): Կազմակերպության խորհրդի նախագահը ՀՀ ոստիկանության պետն է: Այստեղ է տեղաբաշխված ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժինը և այլն:

«Դինամո» ՄՀԿ-ին դրամաշնորհը հատկացվում է կանոնադրական խնդիրների իրականացման համար (հիմքը՝ ՀՀ կառավարության 26.12.2019 թ.-ի № 1919-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետ): Ըստ այդմ, ոստիկանության կողմից յուրաքանչյուր տարի հատկացվող դրամաշնորհի չափը սահմանվում է ՄՀԿ-ի տարեկան պահպանման ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրներից՝ ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (նախկինում՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն) կողմից, անդամավճարներից և գույքի վարձակալություններից գոյացող մուտքերի և հիմնավոր համարվող տարեկան ծախսերի հարաբերակցության հաշվարկով: Ոստիկանության կողմից հատկացվող 24,5 մլն. դրամ դրամաշնորհը անփոփոխ է 2017 թ.ից և կազմում է ՄՀԿ-ի տարեկան մուտքերի շուրջ 19-20 %-ը:

Վերոգրյալով (ֆինանսավորման եղանակով) պայմանավորված վերանում է ըստ առանձին միջոցառումների իրականացման ծախսերի հաշվարկման, հիմնավորման անհրաժեշտությունը:

- Նշված 41,522,0 հազ. դրամ ընթացիկ կրեդիտորական պարտքը պայմանագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան մարվել է ս/թ ապրիլի 7-ին:
- Կից ներկայացվում է «համակարգչային ծառայություններ» հոդվածով 14,949.0 հազ. դրամ դեբիտորական պարտքի առկայությունը հիմնավորող ՀՀ կառավարության 29.03.2019 թ.-ի № 329-Ա և 05.12.2019 թ.-ի № 1724-Ա որոշումները, տեղեկանք հիմնավորումների, ինչպես նաև նշված պարտքի ապահովվածությունը հիմնավորող բանկային երաշխիքի պատճենի հետ միասին :

«Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով 01.04.2020 թ.-ի դրությամբ առկա դեբիտորական պարտքը կազմում է 2,014.4 հազ. դրամ, որից.

ա) 200,0 հազ. դրամը՝ ՀՀ կառավարության 05.03.2020 թ.-ի № 260-ԱԳ որոշմամբ հաստատված վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների սահմաններում առհաշիվ անձի անվամբ բացված քարտին մարտ ամսին փոխանցված և դեռևս չօգտագործված առհաշիվ գումարն է.

բ) 1814,4 հազ. դրամը՝ առաջացել է 2007 թ.-ի դեկտեմբերի 28-ի № ՀՀ ԿԱ Ո ԱՊՁԲ ՀՄ-07 պայմանագրով «Վեբեր» ՓԲԸ-ից 4000 հատ հակագազ, միավորը 18231 դրամ գնով գնման գործարքի գծով: Առկա տեղեկատվության համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, ի պատասխան ոստիկանության 01.03.2011 թ.ի թիվ 11/345 գրության հայտնել է, «որ ոստիկանության հանդեպ «Վեբեր» ՓԲԸ –ի ունեցած պարտքն ընդգրկվել է ընկերության լուծարման միջանկյալ հաշվեկշիռ և գտնվում է «Վեբեր» ՓԲԸ –ի պարտատերերի ցուցակում»: Այդուհանդերձ հարցն ունի հանգամանալից ուսումնասիրության կարիք, որի արդյունքները, հնարավոր սեղմ ժամկետներում, կներկայացվի առանձին տեղեկանքի ձևով:

«Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին» հոդվածով՝ 1,900.0 հազ. դրամ դեբիտորական պարտքը վերագրվում է «Դինամո» ՄՀԿ-ին և փոխանցվում է 1999 թ.-ից: Սակայն առկա արխիվների թե

նախորդ տարիներին և թե այժմ կատարված ուսումնասիրություններով այդ պարտքը ճանաչելու և հաշվեռշռում հաշվառելու անհրաժեշտ և բավարար հիմքեր չեն գտնվել: Այն արտացոլված չէ նաև «Դինամո» ՄՀԿ» -ի որևէ տարվա հաշվեկշռում: Ավելին, նկատի ունենալով «Ոստիկանություն - «Դինամո» ՄՀԿ» տարիներ շարունակ ձևավորված և առայսօր շարունակվող, բնույթով ոչ առևտրային փոխհամագործակցության թե իրավական ձևը և թե տնտեսական բովանդակությունը 1999թ.-ին ոստիկանության հաշվեկշռում այդ պարտքը հաշվառվել է անհիմն կարգով: Հիմքերի (հիմնավորումների) բացակայության պայմաններում հաշվեկշռից նշված պարտքի դուրս գրումն իր հերթին կարող է համարվել խնդրահարույց գործառնություն: